ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-5-10

Թիվ 17/ 180
„02„ նոյեմբեր 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի կողմից 2017թվականի հոկտեմբեր ամսվա ընդունված որոշումները, կարգադրություն չի արձակվել:

Հավելված՝ 5 էջերից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հոկտեմբերի 2017 թվականի N 49 -Ա

ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Արմավիրի մարզ գյուղ Արմավիր 3 փողոց թիվ 28 հասցեում, գտնվող, Հրաչյա Գրիգորի Գևորգյանին և մյուսներին պատկանող օժանդակ շինության գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման շինությունից հասարակական նշանակության փոխելու վերաբերյալ դիմում-հայտը;

Հաշվի առնելով, որ շինության գործառնական նշանակությունը փոխելու համար լրացուցիչ աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն չկա, ղեկավարվելով ՀՀ կառավարության 02.02.2002թ-ի « ՀՀ շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» թիվ 88 որոշումով հաստատված կարգով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 12[1], 17 և 19 կետերի պահանջներով;

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1Հրաչյա Գրիգորի Գևորգյանին, Գրիգոր Մանուկի Գևորգյանին, Հռիփսիկ Մարտիրոսի Մանասյանին, Եվգենյա Գրիգորի Գևորգյանին պատկանող՝ Արմավիրի մարզ գյուղ Արմավիր 3 փողոց թիվ 28 հասցեով, գտնվող; 36.8քառ/մ շինության, կադաստրային ծածկագիր՝ 04-020-0052-0032-010 գործառնական նշանակությունը, բնակելիից փոխել հասարակական նշանակության;

2 Համայնքի բնակելի ֆոնդում կատարել համապատասխան փոփոխություն;

3 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Ռ.Ֆ.Մարգարյան**

2017 թվականի հոկտեմբերի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հոկտեմբերի 2017 թվականի N 48-Ա

ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 2-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրության 70-րդ հոդվածիով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017թվականի հոկտեմբերի 9-ի N 01/18.1/6441-17 հանձնարարականի

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի 2009թվականի փետրվարի 18-ի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 2-Ա որոշմամբ հաստատված 4-րդ հավելվածում ավելացնել նոր 11.1-ի կետ « 11.1-վերահսկում է համայնքում իրականացվող աղբահանությունը և սանիտարական մաքրման աշխատանքները» բառով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2017թվականի հոկտեմբերի 11
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» հոկտեմբերի 2017 թվականի N 47 -Ա

ԱՆԱՄՆԱՊԱՀԱԿԱՆ ՖԵՐՄԱՅԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՍԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի
17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման,անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /լսամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման
ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին »
N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին »թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Ա.ատրատ Ստեպանի Դավթյանին , պատկանող անշարժ գույքի բաժանմամբ 5588.0 քառ/մ -ին /ծածկագիր 01-020-036-/տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 8 փողոցի 1-ին նրբանցք թիվ 2/1
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար.
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Սարգսյան

2017 թվականի հոկտեմբերի 05
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» հոկտեմբերի 2017 թվականի N 46 -Ա

ԱՆԱՄՆԱՇԵՆՔԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի
17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման,անշարժ գույքի՝ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման
ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին »
N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին »թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Արարատ Ստյոպայի Դավթյանին , պատկանող անշարժ գույքի բաժանմամբ 1258.0 քառ/մ -ին /ծածկագիր 04-020-036 /տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 8 փողոցի 1-ին նրբանցք թիվ 2
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝պետական գրանցման համար.
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Սարգսյան

2017 թվականի հոկտեմբերի 05
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1 փ 19 շ հեռ71-5-10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հոկտեմբերի 2017 թվականի N 45-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Արմավիրի մարզի Արմավիր գյուղի բնակիչ՝ Գրիգոր Մանուկի Գևորգյանի դիմումը,Արմավիրի մարզ գյուղ Արմավիր 3 փողոց թիվ 28 հասցեով գտնվող տնամերձ հողամասի վրա գտնվող, ինքնակամ շինության օրինականացման վերաբերյալ;

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ-ի 912-Ն որոշումը ինչպես նաև այն հանգամանքը ;որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,վտանգ չի ներկայացնում քաղաքացիների կյանքին և առողջությանը ,կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ճանաչել օրինական քաղաքացիներ Գրիգոր Մանուկի Գևորգյանին, Հրաչյա Գրիգորի Գևորգյանին, Հռիփսիկ Մարտիրոսի Մանասյանին և Եվագենյա Գրիգորի Գևորգյանին, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի գ.Արմավիր 3 փողոց թիվ 28 հասցեում գտնվող տնամերձ հողամասի վրա կառուցված 46.36 քառ/մ. ինքնակամ օժանդակ շինությունը:

2.Հիմք ընդունելով N 912-Ն որոշման 13.բ կետը և ՀՀ ԿԱ 17.04.2003 թվ-ի N-470-Ն որոշմամբ հաստատված տնարածագնահատման գոտիականության գործակիցը՝ ինքնակամ շինությունը օրինական ճանաչելու համար վճար սահմանել՝ 36200 դրամ-ի չափով;

3.Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում վճարը չմուծելու դեպքում՝ սույն որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Ռ.Ֆ.Մարգարյան**

գ.Արմավիր
2017 թվ-ի հոկտեմբերի 04